

ՌՈՒԲԵՆ ՂԱՐԻԲ ՅԱՆ



ՇԿՈՒ



ՆՈՒՆՈՆ



891.995
2-47

ՊԵՏԿՐԱՏ

891.995
7-47
48

ՌՈՒԲԵՆ ՂԱՐԻՅԱՆ

ՓՇԿՈՆՈՆՈՆ

(Մանկական պոեմ)

ՆԿԱՐՆԵՐԸ՝ Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938



I

Իբե՛ն փոքրիկ փորձու համար
 Հայրը գնեց լերկու ճագար
 Յե՛վ պատրաստեց մեծ խնամքով
 Մի լավ վանդակ նրանց հարմար:
 Արամիկը անուն դրեց
 Ճագարներին իր պուճուրիկ:
 Ժապավենի վրա գրեց
 Մեծ տառերով—ԺՈՒՐԻԿ, ՄՈՒՐԻԿ:
 Յերկու թմբիկ ճագարիկներ,
 Մի մոր բերած լավ բալիկներ,
 Ապրում էյին կանաչ բակում,
 Զվարճանում, պարում, յերգում:
 Արամիկն ել յերբ դասերը
 Վերջացնում, տուն եր գալիս,
 Քաղում եր լավ կանաչները,
 Բերում թարմ-թարմ նրանց տալիս:
 Քույր ու յեղբայր ճագարիկներ
 Նսպես անհոգ, լերջանիկ



860
39

Ապրում եյին հանգիստ, սիրով՝
 Կազմած ուրախ ընտանիք:
 Մեկ՝ դուրս եյին գալիս բակը
 Ու թռչկոտում առվույտում,
 Մեկ՝ թթենու հովի տակը
 Հպարտ, հպարտ պտտում:

II

Այդ նույն բակում մի կատու կար
 Սեփամազիկ, սպիտակավոտ,
 Բեղերը ցից, պոչը յերկար,
 Աչքերը սեփ ու կրակոտ:
 Թե սխալվեր մի մուկ դուրս գար
 Իր բնիցը պտտելու,
 Նա կհասներ թաթով կտար,
 Կտանջեր մինչ ժամն ուտելու:
 Արամիկը այդ ժիր կատվին
 Փեկը Նոնոյ յեր անվանում,
 Սիրում եր ու նրա պատվին՝
 Իր ճաշից միշտ բաժին հանում:
 Բայց արի տես՝ այդ խորամանկ
 Փշկո Նոնոն՝ բկլիկ կատուն,
 Ճագարներին տեսած որից
 Չուներ քուն ու հանգստություն:
 Շատ անգամ ել չեր գնում տուն.
 Բակում մենակ վորսկան դարձած՝
 Ման եր գալիս թաքուն-թաքուն,
 Պոչն արած զենք՝ մեջքին բարձած:
 Ման եր գալիս ու մլավում.
 Վոչ քուն ուներ, վոչ ել դադար,
 Մարդ չգիտեր՝ փորն եր ցավում,
 Թե մի ուրիշ այլ պատճառ կար:



* * *

Բայց ուրիշ եր Փշկո Նոնոն՝
Բեղերը ցից, քիթն անկանոն.
Այդ սեփաշյա բկլիկ կատուն
Գործ եր ուզում բռնել թաքուն:
Մտածում եր, թե լերը մի որ
Ճանկը գցի մի փափլիկի,
Ընթրիք անի մի փառավոր
Ու լացացնի Արամիկին:
Միշտ գնում եր վանդակի մոտ,
Յերկնք պառկում, սուտ քուն տալիս,
Փակում աչքերն իր կրակոտ,
Բայց վռչինչ ել դուրս չեր գալիս:

— Դուք չեք մարսի, չար լակոտներ, —
Ասաց Նոնոն իր մտքում, —
Յեռ կմաքրեմ հաշիվը ձեր
Ատամներով արանքում:
Շատը գնաց՝ քիչը մնաց,
Ենպես առնեմ ձեր հոգին...
Վերջին անգամ նա մոտ գնաց
Ճագարների վանդակին:
Տառը չափեց, մեկը կարեց.
Լեզվին հազար ձեզ տալով,
Ուզեց վանդակը ներս մտնել,
Ճագարներին խաբելով...
— Փափլիկ-մափլիկ ճուտիկներ,
Չալիկ-մալիկ վափիկներ,
Ա՛խ, քարասիրտ ձեր մերը
Ձեզ վոնց գցեց դռները:

Ձեր տերն ել հո շատ ե չար,
Վոր փակել ե ձեզ տանը.
Մտածում եմ անդադար
Յեռ, ձեր բարի Մոտանը:
Գոնե հասներ իմ կուռը,
Բայ անեյի ձեր դուռը,
Վոր փախչեյիք դաշտ ու սար,
Կյանք անեյիք ձեզ համար...
— Մենք չենք սիրում դաշտ ու սար, —
Ասին նրանք միասին, —
Իսկ դու խարդախ բարեկամ,
Մի մտածիր մեր մասին:
Մեզ սիրում ե մեր տերը,
Մենք նրանն ենք, նա՛ մերը,
Մենք չենք լսի քո հիմար
Խորհուրդները կեղծ ու չար:
Մտածմունքդ զո՛ւր ե, զո՛ւր,
Ճարիր ուրիշ կերակուր.
Քեզ մի տանջիր դուր տեղը,
Մենք լավ գիտենք քո ցեղը:

Փշկո Նոնոն ես վոր լսեց,
Աչքը ծռեց բարկացած.
Պոչը անկեց, բեղը սրեց,
Նայեց նրանց ու ասաց.
— Դուք չգիտեք դեռ Նոնոյին,
Ա՛յ խոտակեր վախկոտներ,
Ձեր գլխին լեռ դեռ ինչ ոյին
Պիտի բերեմ, լակոտներ.
Ձեզ նման վատ հարեվաններ
Մ՛վ իր բակում տեղ կանի,
Ա՛յ թող ասի Ասլանը մեր —
Իբ հոր վորդին արժանի:

Ահա չորրորդ տարին է, ինչ
 Ես մեծ բախում նրա հետ
 Ապրում ենք մենք ուրախ ու զինչ,
 Դեռ չենք նայել իրար խեթ:
 Դուք փոխանակ մոտենալու,—
 Խաղանք, լինենք միասին,—
 Ստիպում եք ինձ կազմելու
 Վատ կարծիքներ ձեր մասին...
 Դուք ի՞նչ եք, Վոր. հիմար մի ցեղ,
 Ո՞ւմ ինչին եք պետք գալիս.
 Զարմանում եմ, Վոր ձեզ զուր Ետեղ
 Մարդիկ սնունդ են տալիս:
 Մինչդեռ լես ու Ասլանը մեր
 Տարիներով էս տանը
 Ծառայում ենք որ ու զիշեր,
 Քաղցած քնում դռանը:
 Յես իմն անեմ, դուք ել ձերը,
 Ինչ ուզում է, թող լինի.
 Տեսնենք վերջը, թե ում մերը
 Ում վրա լաց կլինի:
 Ասաց Նոնոն ու խոթոռեց՝
 Աչքերը իր դուրս պրծած
 Յեվ հաստ պոչը գետնին կռեց,
 Քիթը կախեց ու գնաց:

III

Փշկո Նոնոն քանի գնում
 Նիհարում եր, թուլանում.
 Իսկ ճագարները՝ քեֆ անում,
 Ուտում, խմում, չաղանում:
 Ազատ բալում վազ են տալիս,
 Կորչում առատ, կանաչում:

Մի թույլ շշուկ, ձայն լսելիս
 Դեպի վանդակը փախչում:

IV

Մտավ արեվն սարի հետեւ,
 Իջավ խաղաղ իրիկուն,
 Բերեց խելոք մանուկներին
 Քաղցր յերազ, անուշ քուն:
 Փամացույցը գիշերով ուշ
 Աշխատում է՝ թանկ ու թիկ,
 Արամիկը քնած անուշ
 Յերազում է յերջանիկ...
 Շուրջը ահա ժիր ու աշխուժ
 Թիթեռնիկներ վոսկեթեվ,
 Ինքը նրանց հետքից ընկած՝
 Վազ է տալիս հեվիհեվ:
 Մեկ ել ահա բզեզ մի չար
 Կծեց նրա չաղ թուշը
 Ու բզզալով թռավ անտառ,
 Թողնելով իր սուր փուշը:
 Լալով բռնած թուշը ուռած,
 Նա վազ տվեց դեպի տուն,
 Վոտը սահեց, մեկ ել հանկարծ
 Շրճմի, ընկավ մեծ առուն:

* * *

Կուսինն անցավ, աստղը կորավ,
 Աքաղաղը կանչեց զիլ՝
 Ճերմակ ամպը կարմիր դառավ,
 Արեվն ելավ վոսկեծիլ:
 Զարածնի մի շող յեկավ
 Առսամուտից նայեց խեթ:

Արամիկի թշին ընկալ
 Ու խաղ արաց նրա հետ:
 Արամիկը զարթնեց, զգուշ
 Շոշափելով իր թուշը,
 Բայց լճն առնու, բղեղ ու փուշ
 Ժամանակն ել շատ ուշ եր:
 Նա վեր յելավ ու հագնվեց,
 Շտապ-շտապ լվացվեց,
 Ապա թեյեց, գրքերն առավ
 Դեպի դպրոց վաղ տվեց:

V

Բակում Նոնոն մենակ մնաց
 Ու մոտ վագեց վանդակին,
 Տեսավ փոքրիկ դռնակը բաց,
 Ժպիտ խաղաց չար դեմքին:
 Նայեց տեսավ անա քնած
 Ճագարները իրար մոտ.
 Ասլանը զուր հաջնց-հաջնց,
 Բայց գող Նոնոն անամոթ
 Ներս խծկվեց ու դուրս պրծավ
 Արյունոտված վանդակից
 Յեվ մեծ բակում անհայտացավ
 Արյան հետքեր քամակից...

* * *

Դատարկ բակում, փափուկ հողին,
 Իր բնի մոտ՝ ծառի տակ,
 Մի մուկ պառկած իր կուշա կողին
 Միտք եր անում մեն-մենակ:
 Ներկա յեղավ, աչքով տեսավ
 Գող Նոնոյի չար դեմքը,

Հագիվ փախավ բունը հասավ
 Պինդ ծածկելով իր շեմքը:
 Յեվ հավաքեց ստորերկրյա
 Փորոզներին անվանի,
 Պատմեց՝ ինչպես ներկա յեղավ
 Դրսում տխուր մի բանի...
 Հավ մայրիկն ել ձագերի մոտ
 Բակում քուջուջ անելիս
 Տեսավ՝ Նոնոն բերանն արնոտ
 Մի բան շտապ տանելիս:
 Աչքը մթնեց, սիրտը մարեց,
 Ձագերն առավ թեփի տակ,
 Տեղն ու տեղը ծվար արեց
 Ու կուշ յեկավ գլխահակ:
 Հարեվանի սաղն ել տեսավ,
 Հնդկահամլ ել, կատուն ել,
 Գող Նոնոյի արած գործը
 Վոշ մեկից ել թաքուն չեր:

* * *

Արամիկը յեկավ տեսավ,
 Վոր դատարկ եր վանդակը,
 Դեմը միայն արյան հետք կաթ,
 Վոր տանում եր մինչ բակը:
 Նա այդ հետքով ուղիղ գնաց
 Մեծ թթենու բնի մոտ,
 Տեսավ Նոնոն հանգիստ քնած՝
 Գիթ ու մուկին արյունոտ:
 Բռնեց, տարավ, ծնողներին
 Պատմեց դեպքը կես լալով,
 Գող Նոնոյի դեմքին, մեջքին
 Արյան հետքեր ցույց տալով:

Հետո կանգնեց նա դեմ ու դեմ,
 Նստեա ասաց դող կատովին.
 — Յես քեզ սանից կվռնդեմ,
 Լավ կգիպչեմ քո պատովին:
 Ա՛յ ճանգոթան, լպստան,
 Ա՛յ մկնակեր ֆաֆստան.
 Ինչ վոր հանցանք ես արել՝
 Վողջ ներել եմ ու տարել.
 Են ինչ, վոր լես եմ կերել՝
 Քեզ ել բաժին եմ բերել:
 Ել ինչից ես յեղել զուրկ,
 Թյ՛ս, լերեսիդ, հազար թնւք:
 Բայց կարծում ես անցածի պես
 Ես մեկն ել քեզ կներեմ.
 Վո՛ւ, վո՛չ, Նոնո. սխալվում ես,
 Տես քո գլխին ինչ բերեմ:
 Տարավ նրան ու բանտարկեց
 Են վանդակում տընտաժ,
 Դուռն ել վրան ամուր փակեց,
 Դատավորի մոտ գնաց...

VI

Ինն տարեկան Արսենիկը
 Նշանակվեց գատավոր,
 Համբարձումն ու Անժելիկը՝
 Ատենակալ, փառավոր:
 Արամիկը բողոքողն էր,
 Փշկո Նոնոն՝ հանցավոր,
 Արամիկենց բակում այդ որ
 Բազմություն կար անսովոր:
 Աշակերտներ, հարեմաններ
 Թափվել էին, լեկել տես,



Կարծես բակում տեղի ունեւ
 Զվարճալի մի հանդես:
 Դատավորը վոտքի յելավ,
 Հայտարարեց նիստը բաց,
 Վահանիկն եւ քարտուղարեց՝
 Գրչակոթը ձեռքն առած:
 Արամիկը մեկ-մեկ պատմեց,
 Նախ նշելով վատ վարքը,
 Ու փաստերով ապացուցեց
 Դող Նոնոյի արարքը:
 — Մինչև այժմ,—ասաց վերջում,—
 Յես չեմ գիպել իր պատվին,
 Բայց ես մեկը եւ չեմ գիշում,
 Պատիժ տվեք դող կատվին:
 — Առաջ արի, Փշկո Նոնո,—
 Դատավորը ձայն տվեց.
 Վոտքի յելավ Փշկո Նոնոն
 Շուրջը նայեց, մլավեց...
 — Դե՛ ճշտորեն պատմիր, լսե՛ք՝
 Ինչո՞ւ յես դու այդ արել,
 Դու յե՛րբ եյիր այդպես անխելք
 Հանցավոր քալ կատարել:
 Նոնոն լուռ եր ու տխուր եր
 Յե՛վ սոված եր և ծարավ,
 Դատավորի հարցը զուր եր,
 Լուռ եր Նոնոն անիրավ:
 Դատավորը հանցավորի
 Լուռ մնալուց վրդովված,
 Դարձավ դեպի լսողները,
 Հայտարարեց ու ասաց.—
 — Ի՛նչպես յեղավ և ո՞վ տեսավ,
 Ո՞վ կա գործին ճիշտ վկա,

Ո՞վ վոր դեպքին տեղյակ ե լավ,
 Բարի լինի առաջ դա:
 Բայց թե հնուց մեկը ունի
 Նոնոյի հետ ալլ հաշիվ,
 Խոսելիս թող զգուշ լինի,
 Յուցմունք տա ճիշտ ու լրիվ:
 Ասլանն յելավ, վոտքի կանգնեց,
 Պոչը ծանր թափ տալով.
 Գործին հսպես ցուցմունք տվեց,
 Թույլ ծնոտը շարժելով.
 — Ինչպես գիտեք, դրա պապը
 Գողացավ իմ հոր մորթին,
 Այդ պատճառով թե վատ խոսեմ,
 Թող չապրի իմ հոր վորդին:
 Ինձ թե ասեք, յես դեռ մանկու
 Ճանաչում եմ այդ ցեղը,
 Դրանք չունեն պատիվ ու գուժ,
 Արյուն կանեն զուր տեղը:
 Ճիշտ է, յես եւ հնուց այդպես
 Մսակեր եմ անվանի,
 Բայց լավ մարդի, հարևանի
 Յերբեք վնաս չեմ անի:
 Այն, թեև յես հասարակ
 Ու դժնապահ մի շուն եմ,
 Բայց լավ գիտեմ պատիվ, հարգանք,
 Ես չոր գլխիս խելք ունեմ:
 Զորս տարի յե հավատարիմ
 Ծառայում եմ այս տանը,
 Բայց մինչ որս փոքրիկ տերն իմ
 Զի տեսել իմ վատ բանը:
 Անցյալ տարի, աչքիս առաջ
 Նա գողացավ յերեք ձագ,

Լի, ետեղ ե հավ մայրիկը,
 Քող նա խոսի համարձակ:
 Այս գարնանը հանցավորը
 Խեղդեց յերեք ճնձղուկ,
 Պահարանից անցյալ որը
 Նա դուրս քաշեց հինգ հատ ձուկ:
 Պեռք ե ասել, տան տիկինն ել
 Շատ ե դժգոհ այդ կատվից,
 Ամենքի մոտ նա ընկած ե
 Իրեն վարքից ու պատվից:
 Եսպես տեսա. — անցյալ ցերեկ,
 Յերբ դատարկվեց մեր բակը,
 Արամիկը մոռացել եր,
 Բայ եր թողել վանդակը:
 Նռնոն տեսավ ու ներս պրծավ,
 Ներսում լավեց աղմուկ-ճիչ,
 Բերանն առավ, տանջեց, տարավ
 Ու վերջացավ ամեն ինչ:
 Շատ շարժեցի ծառի ջրքը,
 Շատ հաջեցի՛, կանչեցի՛,
 Բայց ամուր եր վզիս թուկը,
 Յես իդուր տեղ տանջվեցի...
 Յեթե կուզեք բակի սիջից
 Այդ վատ կողմը վերանա,
 Յես խնդրում եմ դատավորից,
 Վոր խնդրին լուրջ մոտենա.
 Յեվ խնդրում եմ դատող կաղմիդ,
 Վոր դրան խիստ պատիժ տաք,
 Յերկրի վրա պետք չե ապրի
 Այդպիսի զոդ ավազակ:
 Ասեմ ե այն, վոր այս ամառ
 Ի հավ տակով եր արել,

360
 39

Յեվ դտել եր մի սուտ պատճառ
 Թե չար աղվեսն ե տարել:

Դեմի պատից յելավ մի մուկ,
 Մեկ հազաց ու փոշտաց,
 Բիթը մաքրեց, բեղը սրեց,
 Ակնոց դրեց, ճստճստաց. —
 — Եդ զոդ նռնոն, թե հարցնեք,
 Ինձ մոտ չարժե մի դարի,
 Բալց թե նա ի՞նչ իրավունքով
 Այդքան վնաս ե տալիս:
 Մեր մկների ցեղի վրա
 Նա ախքան ե ան թողել,
 Վոր վոչ մի մուկ վախից նրա,
 Զի կարենում քալլ փոխել...
 Մենք ել շնչող, ապրող ցեղ ենք,
 Ունենք ծնունդ, ունենք մահ,
 Այդ անպետքից ինչո՞ւ նեղվենք՝
 Գաղցից լինենք սովամահ:
 Սա ել կարգ ե, սա ել վարք ե,
 Մեծի կողմից պատիվ, հարգ ե.
 Մի դեպք անա. հինգ որ չկա,
 Վոր սա կերավ իմ աղջկան:
 Ամեն վայրկյան կտրել ենք մենք
 Մեր ապրելու, կյանքի հույսը.
 Միշտ գետնի տակ՝ ե չգիտենք
 Վոնց ե մթնում, բացվում լույսը:
 Միթե չկան սրանց համար
 Մի պատիժ կամ մի ուրենք,
 Ինչո՞ւ ցեղով մեր անհամար
 Փոշխանանք ու կորենք:
 Շատ ե անա՛ն այդ կենդանին,
 Անգուլթ ե ու անհոգի,

Վողջ մկների ցեղի կողմից
 Յես յեկել եմ բողոքիս
 Դրա ձեռքում զերի յենք մենք,
 Վատ ե անցնում մեր ուրը,
 Գիշեր, ցերեկ հանգիստ չունենք.
 Միշտ քաղցած ե մեր փորը:
 Ուրեմն եսպէս, կեսոր եր տաք,
 Նոր եյի յես դուրս յեկել,
 Վոր սկսեմ քիչ աշխատանք,
 Աչքս ընկավ ու մեկ ել
 Տեսա Նոնոն հանգիստ նստած
 Մեծ թթենու հովի տակ,
 Գրթ ու մոռթն արյունոտած,
 Կողքին ել մի նապաստակ:
 Մթնեց աչքս. վախից հանգա
 Ու ել վոչինչ չտեսա,
 Հագլիվ փախա տունս ընկա,
 Հավաքվեցին քուր, փեսա...
 Վորքան կուգեք փաստեր թափեմ
 Ձեր առաջը շատ ու նոր,
 Այդ ցեղը զեռ պապից պապ ե
 Գողության մեջ հանցավոր:
 Յես ել չասեմ, զուք լավ գիտեք,
 Ճանաչում եք հո նրան,
 Ումը կուգեք քննեք, տեսեք.
 Հազար հանցանք կա վրան:
 Ե՛լ չեմ խոսի, ով դատավոր,
 Մնացածը ձեր բանն ե,
 Բայց հուսով եմ արժանավոր
 Մի խիստ վճիռ կհանեք:
 Հավ մայրիկն ել վոտքի յելավ,
 Փաստեր բերեց մի քանի

Յեվ բողոքեց, վոր Նոնոյի
 Վարմունքը ել չի տանի:
 — Այ թող ասի տան տիկինը,
 Վորքան յես ձու յեմ ածել,
 Այդ ձվերի մեծ բաժինը
 Միշտ Նոնոն ե գողացել:
 Տան տիկինն ել ե վախենում
 Մի ժամ թողնել իր տունը,
 Այս անկյունում կաթն ե թափում,
 Այն անկյունում՝ մածունը:
 Թե Նոնոյին այդ աներես
 Մենք չպատժենք, այլ ներենք,
 Պետք ե ասել՝ մենք ինքներս
 Մեզ շատ վնաս կբերենք:
 Թված զեպքերն ու հանցանքը
 Ձի փրկելու գող կատվին,
 Յես խնդրում եմ դատավորին,
 Չխնայի իր պատվին:

Մի քանի խոսք ուզեց ասել
 Հարեվանի կատուն ել,
 Բայց վերջինս շատ մտածեց
 Յեվ վորոշեց... լուռ լինել:
 Հետո ուզեց պաշտպան լինել,
 Բայց ձեռքի տակ փաստ չկար,
 Իսկ առանց փաստ յեթե խոսեր,
 Խնամություն դուրս կգար...
 Յեվ լուռ նստեց յերեք թաթին,
 Պոչը շինեց նստարան,
 Թաթը դրեց չալ ճակատին,
 Ու մտքերը թեվ առան...

* * *

Հարցը արդեն լուծվեց, պարզվեց,
Ուրիշ վկա ել պետք չեր,
Արամիկին խոսք տալ չարժեք,
Պետք եր վճիռն սկսել:
Վերջին անգամ դատավորը
Ձայնը տվեց Նոնոյին,
Վոր նա ասի, հանցավոր ե
Իրեն գտնում լիովին:
Նոնոն ընկած մտքերի ծով,
Զցանկացավ խոսք ասել,
Նայեց մկան աչքի տակով,
Ուզեց բռնել ու մարսել...
Վեր կացավ նա առաջ շարժվեց,
Ուզեց մկան միսն ուտել,
Մեկ ել հանկարծ կանգնեց, մնաց,
Նրան զսպեց ինչ-վոր թել:

Դատավորը հայտարարեց
Տաս ըստե ընդմիջում,
Դատարանը առանձնացավ,
Վոր հանի մի վորոշում:
Հանդիսականն սղասում եր
Վորոշմանը անհամբեր,
Նոնոն հանգիստ սկսել եր
Վզից թելը կրծոտել...

* * *

— Այ Անժելիկ, այ Համբարձում,
Ասեք տեսներեք, ի՞նչ անենք,
Ոգնեք ինձ այս զժվար հարցում,
Վոր վճիռը ճիշտ հանենք:

Պարզ ե արդեն, վոր գող Նոնոն
Վորտեղ մի քայլ ե արել՝
Ամենքին ել աչքի ընկնող
Մի վնաս ե պատճառել:
Հավ մայրիկը ճիշտ մոտեցավ,
Վոր Նոնոյին թե ներենք,
Հավ իմացեք, նրա ձեռից
Շատ վնասներ կկրենք:
— Վորը կտրենք թող կաղ մնա,—
Կարծիք տվեց Անժիկը.
— Պոչը հատենք, անպոչ մնա,—
Առաջարկեց Համբիկը:



— Ականջներից մեկը կտրենք:
— Կամ ել քիթը փայտիկ դնենք:
— Սոված պահենք:
— Աչքը հանենք:
— Վերջը պետք ե
Մի բան անենք:

Վիճում եյին նրանք անվերջ՝
Դեռ չհանած վորոշում,



Հավ մանուկներ, ինձ կներեք,
 Մանրամասն չեմ հիշում,
 Մեկ ել տեսա, բախում այդ մեծ
 Ուժեղ աղմուկ բարձրացավ,
 Ե՛յ, վազեցե՛ք, նոնոն բռնեց
 Վկա մկան ու փախավ:
 Այսպես ահա հանցավորը
 Պատիժ չառած դուրս պրծավ,
 Մնաց մոլոր դատավորը,
 Մեր զրույցն ել վերջացավ:



Գառ. խմբագիր՝ Ս. Վահունի
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Գլուխաբեր՝ լրագրող 3703. Հրատ. № 4585.

Գառվեր 376. Տիրաժ 5000.

Քուղթ 62×74. Տպագր. 1¹/₂ մամուլ.

Մեկ մամ. 24,480 նշան. Հեղինակային 0, 55 մամ.

Հանձնված է արտադրության 14 ապրիլի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 4 հունիսի 1938 թ.

Գեղարար I պատրան, Յերեան, Լենինի, № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0408044

ԳՐԱԸ 80 Կ.

58

10877



Ր. ԳԱՐԻԲՅԱՆ
ՍԻՊԻՆՈ ՄԱՐԿ
ԳԻՅ ԱՐՄ. ՍՍՐ ԵՐԵՎԱՆ